ինչո՞ւ չի խօսիր, միթէ՞ նա կարծիք չունի, եթէ նա կարծիք չունի ի՞նչ ենք կեցել. երթանք ամէն մարդ իւր տունը»:

— Տղա՛յ, դու լուռ կա՛ց,— ըսաւ ծեր մը սաստելով,— խօսքը քե՞զ ընկաւ:

— Մկր եղբայր, մի՛ սաստեր, տղան լաւ խօսեցաւ:

— Ո՛ւր է Յովնան, Յովնա՛ն, Յովնա՛ն,— գոչեցին քառասուն ձայն միաբան. եւ ահա սրահին մէկ կողմեն դուրս եկաւ միջահասակ մարդ մը, որ երեսին գոյնով տարբերութիւն չունէր ոչ ոքէ. արեւը, քամին, տաքն ու ցուրտը փչէր էին այդ երեսին վրայ. բայց երկու խոր աչքեր ունէր, որ երկու փայլոմն սլաք էին երկաթեայ եւ թափ կ'անցնէին, երբ նկատէին դիմացնին, սրտին խորը իբր թէ կը տեսնէին: Կլոր գլուխ, քառակուսի դէմք, ջղային, մսուտ կազմուածք, քառասնի չափ տարիք, ահա՛ մարդը, որ Յովնան կը կոչուէր:

Յովնան ոչ միայն սասունցուոց անբաժանելի աշտէն ձեռքն ունէր, այլ մէջքն երկսայրի սուր մը գօտուոյն մէջ կ'երեւէր:

— Խոսէ՛, Յովնան, դո՛ւ խոսէ,— ըսաւ ժողովուրդը միաբերան, եւ երբ ամէնքը լռեցին՝ այսպէս խօսեցաւ Յովնան.

— Մտիկ ըրէք ինձ, ով Խոյթի ժողովուրդ, եթէ դուք կ'ուզէք Ս. Կարապետ փրկել այդ նզով արաբներէ, եթէ դուք կ'ուզէք Բագարատայ վրէժը հանել՝ այս Ս. Սարգսի շաբաթը մի՛ կորսնցնէք, անհոգ մի նստիք. այս բուքը՝ ո՛յ գիտէ թերեւս վերջինն է այս ձմռան, քանի որ այդ տաք դժոխքի սատանաները սառած, թմրած, ընդարմացած նստել են մեր խեղճ քաղքցուոց տունները, քանի որ վառարան են չեն կրնար հեռանալ անօրէնները, ժա՛մ է նոցայ վրայ հարձկելու. փառք աստուծոյ, մենք լաւ անդամներ ունինք որ, ցրտուն ալ կը դիմանան, տաքուն ալ. իսկ թէ հարցնէք թէ ե՛րբ պէտք է յարձակիլ քաղքին վրայ՝ ես կ'ըսեմ թէ հիմա այս բուքին, այս ձիւնին. ասկից մինչեւ Մուշ կը հասնինք չորս ժամու մէջ եւ մենք քաղաք կը մտնենք, երբ աւազակները թմրած՝ առաւօտու քունին են ընկղմած.